ՈՐՈՇՈՒՄ

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

քաղ. Երեւան 2 դեկտեմբերի 2008թ.

Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի 2-րդ դատական կազմը

Նախագահությամբ՝ Ռ.Պապայանի

Անդամակցությամբ՝ Հ.Նազարյանի

Հ.Դանիելյանի

Քննության առնելով ՀՀ քաղաքացի Ռուբեն Թորոսյանի դիմումի ընդունելիության հարցը

ՊԱՐԶԵՑ

Քաղ. Ռուբեն Թորոսյանը դիմել է Սահմանադրական դատարան, վիճարկելով ՀՀ ընտրական օրենսգրքի 40.1 հոդվածի 3-րդ կետի 3-րդ պարբերության և 63.2 հոդվածի 3-րդ կետի, ՀՀ Վարչական դատավարության օրենսգրքի 143 հոդվածի, ՀՀ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 232 հոդվածի սահմանադրականությունը:

2-րդ դատական կազմը գտավ, որ ներկայացված դիմումը ենթակա է մերժման «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներից ելնելով, որի համաձայն՝ գործի քննությունը մերժելու մասին որոշում է ընդունվում, եթե դիմողը իրավասու չէ դիմելու սահմանադրական դատարան: Քաղ. Ռ. Թորոսյանը հանդիսացել է ՀՀ Նախագահի թեկնածու Լ. Տեր-Պետրոսյանի վստահված անձ: Նրա լիազորությունները դադարել են ընտրությունների ավարտից հետո: Քանի որ օրենքների վիճարկվող դրույթները անձամբ քաղ. Ռ. Թորոսյանի նկատմամբ չեն կիրառվել, հետևաբար նա ՍԴ դիմելու իրավունքի սուբյեկտ չէ:

Ղեկավարվելով Սահմանադրական դատարանի մասին օրենքի 69 հոդվածի 6 կետով, Սահմանադրական դատարանի 2-րդ կազմը

ՈՐՈՇԵՑ

Քաղ. Ռուբեն Թորոսյանի դիմումը՝ ՀՀ Ընտրական օրենսգրքի 40.1 հոդվածի 3-րդ կետի 3-րդ պարբերության և 63.2 հոդվածի 3-րդ կետի, ՀՀ Վարչական դատավարության օրենսգրքի 143 հոդվածի, ՀՀ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 232 հոդվածի սահմանադրականությունը վիճարկելու մասին, մերժել:

Նախագահող՝

Անդամներ՝

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԲՈՒԹՅՈՒՆ